ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2013-3-2-Ա

ք. Երևան 11.09.2013թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2013 թվականի սեպտեմբերի 10-ի նիստում քննարկեց 2013 թվականի հուլիսի 29-ին արտոնագրային հավատարմատար Էդուարդ Նահապետյանի կողմից ներկայացված՝ Դը Փրոքթր ընդ Գեմբլ Քամփնի ընկերության (այսուհետ՝ բողոքարկող) «3D WHITE» (հայտ No20121407) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերի և ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538 - Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 90-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից, որոնք առևտրում ծառայում են ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցման ժամանակը, տեսակը, որակը, քանակը, ստեղծման նպատակը, արժեքը, աշխարհագրական ծագումը կամ ապրանքների և (կամ) ծառայությունների այլ բնութագրերը նշելու համար: Այդպիսի նիշերից են, օրինակ՝ նկարագրական կամ գովաբանական բնույթի նիշերը: Տվյալ դեպքում «3D WHITE» արտահայտությունը, որն անգլերենից թարգմանաբար նշանակում է «եռաչափ սպիտակ», չի կարող գրանցվել, քանի որ գովազդ է հանդիսանում, չունի տարբերակիչ հատկություն և առևտրում ծառայում է ապրանքի ստեղծման նպատակը նշելու համար: Այսինքն սպառողը տեսնելով «3D WHITE» արտահայտությունը կարող է ենթադրել, որ ապրանքը օգտագործելիս ինքը կհասնի եռաչափ սպիտակ արդյունքի: Բացի վերը նշվածից, հայտարկված ապրանքային նշանը բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից, որոնք համընդհանուր են դարձել առևտրային պրակտիկայում, և դրանց կիրառումը տարբեր ընկերությունների կողմից դարձել է օրինաչափ:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու, քանի որ մերժված ապրանքային նշանը գովազդ է հանդիսանում, չունի տարբերակիչ հատկություն և դրա տարրերի կիրառումը տարբեր ընկերությունների կողմից դարձել է օրինաչափ:

Բողոքարկողը, ինչպես բողոքում այնպես էլ նիստի ժամանակ նշեց իր անհամաձայնութունը որոշման վերաբերյալ: Վերջինս պնդեց, որ "3D WHITE" ապրանքային նշանը լայնածավալ օգտագործման շնորհիվ ձեռք է բերել տարբերակիչ հատկություն և սպառողը այն տեսնելով միանշանակ կվերագրի Դը Փրոքթր ընդ Գեմբլ Քամփնի ընկերությանը:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-ին ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել արտոնագրային հավատարմատար Էդուարդ Նահապետյանի կողմից ներկայացված՝ Դը Փրոքթր ընդ Գեմբլ Քամփնի ընկերության «3D WHITE» (հայտ No20121407) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

Բողոքարկման խորհրդի նախագահ Գ. Մելքոնյան